ArmLur.am

I SSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 ապրիլի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

55
(2905)

100 դրամ

ք. Երեւան, Արովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԵՐԹՆ ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆՆ Է

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ապրիլի 16-ին իրավապահ համակարգը փորձել է կապ հաստատել առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի հետ՝ նախարարության շուրջ տեղի ունեցող դեպքերի մասով նրան մի քանի հարց ուղղելու համար: Սակայն նախարարությունից նախաքննական մարմնին պատասխանել են, թե օրենքով սահմանված կարգով ծանուցում ուղարկեք, ու նախարարը կգա, կպատասխանի ձեր հարցերին: Դատելով իրավիճակից՝ Կոմիտեն համապատասխան ծանուցումը կուղարկի ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին: Կատարվածի մասով դիմեցինք առողջապահության նախարարություն. ի պատասխան՝ նախարարի մամուլի խոսնակ Մարիամ Ծատրյանը հայտնեց. «Տեղեկությունը մտացածին է. հերքում եմ: Ինչպես երեկ տիկին նախարարը նշեց՝ վերջին շրջանում որեւէ գործի շրջանակում չի հարցաքննվել, իրավապահների կողմից որեւէ հարցաքննության չի հրավիրվել: Նախադեպ չեմ հիշում, երբ Անահիտ Ավանեսյանը, վատառողջ լինելու պատճառով անգամ աշխատանքից բացակայի»: Նշենք, որ ապրիլի 16-ի վաղ առավոտից, ՀՀ առողջապահության նախարարությունում ՀՀ քննչական կոմիտեի՝ պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում իրականացվող քրեական վարույթով՝ ՀՀ Քննչական կոմիտեի քննիչների կողմից, ՀՀ ԱԱԾ աշխատակիցների օժանդակությամբ իրականացվեցին անհետաձգելի քննչական եւ այլ դատավարական գործողություններ, այդ թվում՝ ՀՀ առողջապահության նախարարությունում եւ «Ուիգմոր» բժշկական կենտրոնում կատարվեցին խուզարկություններ: Իրավապահները կասկածում են, որ մանկական մեծ հիվանդանոցի բացմանը մասնակցած Անահիտ Ավանեսյանը նաեւ մասնաբաժին ունի այդ կառույցում եւ սկսել է պետպատվերի բաշխումները հօգուտ հիվանդանոցի անել: Բացի դրանից, քանի որ «Արմֆարմացիա» դեղագործական խոշոր ընկերություններից մեկում խոշոր բաժնեմաս ունի Անահիտ Ավանեսյանի մայրը, տնօրենն էլ ամուսինն է եղել, կասկածներ կան, որ դեղերի շուկայում մի շարք ապօրինություններ, գուցե նաեւ, այդ խողովակով է արվում: Այսինքն՝ շահերի բախման կասկածներ կան: Եվ ահա, իրավապահները գնացել էին ստուգելու այս ամենը. իսկ Անահիտ Ավանեսյանը «անմեղ» աշխատում էր՝ ՀՀ կառավարության նիստի շրջանակներում:

ԱԺ նախկին պատգամավոր Միեր Սեդրակյանի ընտանիքին պատկանող «Բիդեք» ՍՊԸ-ում հայտնաբերվել են 4 չձեւակերպված վարձու աշխատողներ, որոնց հարցով կազմվել է 1 միլիոն դրամի ակտ: Առավելապես պետական պատվերով եւ Երեւանում մշտապես շինարարություն իրականացնող «Բիդեքը» չհիմնավորված ռիսկի է գնացել, քանզի շինարարության բնագավառում միշտ առկա են կյանքի համար վտանգավոր իրավիճակներ, եւ դժբախտ պատահարի դեպքում աշխատողի չգրանցված լինելը լի է պատասխանատվության խստագույն հետեւանքներով: Մյուս կողմից՝ իշխանությունները իրենց «սրտի» կառուցապատողներից որ մեկի մոտ էլ փորձեն ստուգում իրականացնել, կբացահայտեն ավելին. այլ հարց է, որ չեն անում. եւ ինչո՞ւ...

Օրերս ՊԵԿ-ը հատարարեց, որ 2023 թվականի եկամտային հարկի տարեկան հաշվարկ-հայտարարագրի ներկայացման վերջնաժամկետը հետաձգվում է մինչեւ հուլիսի 22-ը: Այս մասին ՊԵԿ-ը տեղեկացնում է հայտարարագրերի լրացման վերջնաժամկետից գրեթե մեկ ամիս առաջ, երբ պետական բոլոր պատասխանատու կառույցները ֆիզիկապես եւ տեխնիկապես «պայթեցված» են: Բացատրենք. բանն այն է, որ ՊԵԿ-ը հայտարարությունում մասնավորապես նշել է. «Հայտարարատուներին տեղեկացվում է, որ, հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 53 հոդվածի 6-րդ մասը, եւ հաշվի առնելով, որ 2023 թվականի համար հաշվարկ-հայտարարագիր ներկայացնող անձանց մի մասը դեռ չի կարողացել անցնել անձի խիստ նույնականացում՝ նույնականացման քարտի կամ բջջային նույնականացման քարտի միջոցով, ինչպես նաեւ ՀՀ ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունում նույնականացման քարտ ստանալու համար առկա են մեծաքանակ հերթեր, 2023 թվականի համար հաշվարկ-հայտարարագիր ներկայացնելու վերջնաժամկետը հետաձգվում է համապատասխան հաշվարկ-հայտարարագիր ներկայացնելու վերջնաժամկետի օրվանից 81 օրով՝ մինչեւ սույն թվականի հուլիսի 22-ը»: Հետաքրքիրն այն է, որ չկա երաշխիք, որ մինչեւ հուլիսի 22-ը հերթերը ավարտված կլինեն, եւ համակարգը անխափան կգործի: Սա դառնում է եւս մեկ ապացույց այն բանի, որ իշխանությունը փորձում է ինչ-որ բան փոխել՝ պատմության մեջ մնալու համար, սակայն երբեք այդ փոփոխության ռիսկերը եւ խնդիրները հաշվի չի առնում: Արցախից բռնի տեղահանված քաղաքացիներին անձնագրայիններում դռնեդուռ գցելուց հետո էլ չպատկերացրին, որ նախնադարյան համակարգը 21-րդ դարում չի գործելու, որ մարդիկ հերթերը իրենք կսահմանեն՝ թղթի վրա գրելով: Անձնագրայիններում վիզաների, քաղաքացիության եւ այլ հարցերի ժամանակ առաջացած հարցերը փորձեցին լուծել էլեկտրոնային հերթագրման համակարգի միջոցով, սակայն, դեռ չլուծած մի ողջ համակագի խնդիր՝ բարդվեց մյուսը. հայտարարագրման համակարգը լրացնելու համար պետք է ունենալ ID նույնականացման քարտ: Հենց սրանց պատճառով էլ հերթեր են գոյանում, եւ խափանվում է մի ողջ համակարգ: Ստացվում է, որ համակարգի ներդրման պահից, դրանից հետո եւ լրացման պահին պատրաստ էր հայտարարատու անձը, սակայն ո՛չ պետությունը, ո՛չ համակարգը, ո՛չ էլ ՊԵԿ-ը պատրաստ չէին այս բեռն իրենց ուսերին առնելու առաքելությանը:

ՀՀ իշխանությունները ԵՄ անդամակցության հարցն այլեւս անհաս ցանկություն են համարում: Ինչպես ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, վերջին շրջանում ՔՊ-ականների համար անվտանգային բոլոր հարցերը մի կողմ դրած՝ ԵՄ անդամակցության թեկնածության հարցը դարձել էր թիվ մեկ օրակարգ, ՔՊ գրեթե բոլոր նիստերի առաջնային հարցը սա էր: Հատուկ ԵՄ անդամակցության հարցի շուրջ քննարկում ունենալու համար Նիկոլ Փաշինյանը շաբաթը մի քանի անգամ գալիս էր ԱԺ՝ փակ հանդիպման: Բայց, արի ու տես, ՔՊ-ականները հավանաբար գլխի են ընկել, որ սա մեկ օրվա հարց չէ ու որոշել են այս պահին առկախել դրա շուրջ քննարկումները: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ առկախման հիմնական պատճառն այս հարցի շուրջ ՔՊ-ում առկա տարաձայնություններն են: Չնայած ինտենսիվ հանդիպումներին՝ ՔՊ-ականներին այդպես էլ չի հաջողվել կոնսենսուսի գալ սրա շուրջ: Թիմի «Եվրոպամետ» հատվածն այն կարծիքին է, որ պետք է արագ գործել ու ամբողջ ռեսուրսը ներդնել, որ գործընթացը հաջողությամբ ավարտին հասցնեն, մի մասն էլ գլխի է գցել, որ դա հեշտ բան չէ, պետք է ճիշտ գնահատել դրա հետեւանքներն ու նոր գործել: Ահա այս տարակարծությունների արդյունքում ԵՄ անդամակցության հարցը, թեեւ փակված չէ, սակայն այս պահի դրությամբ երկրորդ պլան է մղվել:

ՉԻ ՀԱՎԱՏՈՒՄ ՄԻՋԱԴԵՊԻՆ

«ՇՈՒ ԵՆ ՍԱՐՔԵԼ». ԱՂԱՋԱՐՅԱՆ

ArmLur.am-ի զրուցակիցը ՔՊ խմբակցության դատգամավոր Հովիկ Աղազարյանն է:

-Պարոն Աղազարյան, երեկ հայտնի դարձավ, որ Ձեր թիմակցի՝ Հակոբ Ասլանյանի հետ վեճի բռնված քաղաքացուն դաժան ծեծի են ենթարկել, թքել են երեսին: Սա տեղի է ունեցել քաղաքացուն ՁՊՎ տեղափոխվելու ճանապարհին, երբ նրա ձեռքերը շղթայված են եղել: Այս մասին ահազանգել են նաեւ նրա պաշտպանները, նրան տեսակցած ընդդիմադիր պատգամավորները:

-Լկտիաբար ստում են. եթե չկա դատաբժշկական արձանագրություն, ապա լկտիաբար ստում են:

-Պարոն Աղազարյան, բայց քաղաքացին է նրանց հստակ պատմել, թե ինչպես են իր հետ վարվել: Բացի սրանից՝ թե՛ պաշպանները, թե՛ պատգամավորները տեսակցել են քաղաքացուն, տեսել են՝ ինչ վիճակում է նա:

-Նման հայտարարությունները հո բառերով չե՞ն ասվում, գոյություն ունեն համապատասխան ընթացակարգեր. ինչո՞ւ անմիջապես չեն հրավիրել բժշկի, տրամաբանական հարց է առաջանում՝ ինչո՞ւ պաշտպանները չեն արել, հետեւաբար՝ շոու են սարքում իրենք:

Իրենք ասում են, իրենք էլ այդ ասածին հղում կատարում: Չկա համապատասխան ընթացակարգով բժշկական փորձաքննության զննություն. ես կարող եմ ասել միայն, որ իրենք ստում են:

-Քաղաքացին նաեւ իրեն այցելած ՄԻՊ արագ արձագանքման խմբին է պատմել այս ամենը:

-Ըստ այս քաղաքացու՝ Հակոբ Ասլանյանը հարձակվել էր իր վրա, հենց իր նկարած տեսագրությունն էլ, երբ նայում ենք, ասում է՝ հարձակվել են իր վրա, բայց որեւէ ողջամիտ մարդ, որ նայում է այդ երիտասարդի կողմից արված տեսագրությանը, կարո՞ղ է նման հետեւություն անել:

-Բայց Հակոբ Ասլանյանն ինքն էր պատմել էր, որ հրել է քաղաքացուն:

-Հակոբ Ասլանյանը չի հերքում, որ հրել է, բայց քաղաքացին ու իր պաշտպանը հայտարարում են, թե հարձակվել են:

Քանի չկա դատաբժշկական փորձաքննութունը, իմ պատասխանը նույնն է լինելու՝ նրանք լկտիաբար ստում են: Պատկերացնո՞ւմ եք, եթե իսկապես նման բան լիներ, հիմա նրանք հեռախոսներով նկարել էին այդ տղային, կատարված խոշտանգման հետքերը եւ բերել էին բոլորիս աչքն էին «մտցրել»: Հետեւաբար՝ չեմ կարող անհիմն դատողություններ անել:

-Հնարավոր է՝ քաղաքացին չի ցանկացել այդ վիճակում իր լուսանկարները հրապարակվեն:

-Կարող է, իհարկե, այդ դեպքում բժշկի արձանագրություն էլ կարող էր լինել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԿՐԵՄԼԸ ՀԱՍՏԱՏԵԼ Է ԽԱՂԱՂԱՊԱՀՆԵՐԻ ԴՈՒՐՍԲԵՐՈՒՄԸ

Կրեմլի խոսնակ Դմիտրի Պեսկովը հաստատել է, որ ռուսական խաղաղապահ զորախումբը հեռանում է Լեռնային Ղարաբաղից: Ավելի վաղ նման տեղեկություն էին հայտնել ադրբեջանական լրատվամիջոցները՝ տարածելով նաեւ ռուսական ռազմական տեխնիկայի տեղաշարժը ներկայացնող տեսանյութեր:

Նշվում է, որ ռուսական անձնակազմը մի քանի օր առաջ լքել է Դադիվանքի տարածքը: Ըստ ադրբեջանական կողմի՝ համալիրն այժմ հսկում է Ադրբեջանի ոստիկանությունը:

Հիշեցնենք՝ ռուս խաղաղապահ զորակազմը տարածաշրջանում տեղակայվել էր 2020 թվականին՝ 5 տարի ժամկետով: Պայմանավորվածությունների համաձայն՝ այնտեղ են ուղարկվել 1960 զինծառայող՝ հրաձգային զենքով, 90 զրահամեքենա եւ 380 միավոր ավտոմոբիլային եւ հատուկ տեխնիկա: Ըստ նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության՝ զորախմբի տեղակայման ժամկետը հերթական 5-ամյա ժամկետներով ավտոմատ կերպով երկարաձգվում է, եթե կողմերից որեւէ մեկը ժամկետի ավարտից 6 ամիս առաջ առարկություն չի հայտնում:

Խաղաղապահները, սակայն, գործնականում ձախողել են առաքելությունը, ինչի հետեւանքով Լեռնային Ղարաբաղն ամբողջությամբ հայաթափվել է:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է

2018 թվականի մայիսի 15-ին ՀՀ առողջապահության նախարարությունում ունեցած ելույթի ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ «Պետական պատվերի համակարգը սպառել է իրեն, եւ մենք պետք է փորձենք այնպիսի համակարգ ներդնել, որպեսզի կարողանանք լուծել ռազմավարական նշանակության այդ հարցը»:

«Ժողովուրդ» օրաթերթը արձանագրեց, որ շուրջ 6 տարի անց, ոլորտում նույն պատկերն է. քաղաքացիները բողոքում են, որ երբ պետպատվերով դիմում են բուժսպասարկման, պատասխան են ստանում, թե պետպատվերը վերջացել է: Ու զարմանալի է, թե ինչպես է կատարվում պլանավորումը, բաշխվածությունը, որ տարվա կեսին արդեն այն սպառվում է:

Ընդ որում, մամուլը հաճախ է գրել այս ոլորտում շահերի բախման, կոռուպցիոն ռիսկերի մասին: Օրինակ, երբ Արսեն Թորոսյանը առողջապահության նախարար էր, պետպատվերով միլիոնավոր դրամների հատկացում էր կատարվում նրա կնոջը պատկանող բժշկական կենտրոնին:

«Միբս» բժշկական կենտրոնը, որը 2017 թվականին պետպատվերի գումար ընդհանրապես չի ստացել, հեղափոխությունից հետո դարձել է պետբյուջեից ամենաշատ գումարներ ստացող կենտրոններից մեկը:

Հատկացումները, ըստ Առողջապահության նախարարության, եղել են այսպիսին.

- 2017 - 0 դրամ
- 2018 - 25.1 մլն դրամ
- 2019 - 98.9 մլն դրամ
- 2020 - 127.6 մլն դրամ

Բա ասում եք՝ կոռուպցիա չկա:

«ԵՐԿՈՒ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆԱՊԱՀՆԵՐ ԿԼԻՆԵՆ»

Այսօր Նիկոլ Փաշինյանը կրկին գնացել էր Տավուշ՝ ոսկեպարցիների հետ սահմանազատման աշխատանքների մասով քննարկում ունենալու:

Քաղաքագետ Սուրեն Պետրոսյանն ArmLur.am-ի հետ զրույցում, մանրամասներ հայտնելով հանդիպումից, պատմեց, որ Փաշինյանը ոսկեպարցիներին ասել է՝ 90%-ով համաձայնեցված է Ադրբեջանի նախագահի հետ՝ մենք մեր տարածքում մնալու ենք նույն դիրքերում. «Փաշինյանն ասել է՝ մի հատվածում միայն կարող է տարածքի փոխանակում անենք՝ համարժեք, այսինքն՝ այնպիսի փոփոխություն, որ միջպետական ճանապարհը մնա մեր վերահսկողության տակ:

Մինչ Ոսկեպար հասնելը մի տարածք կա, որը, ըստ իրենց, ԽՍՀՄ քարտեզով է ադրբեջանական, հիմա ասում են՝ դա մնա մեր վերահսկողության տակ, եռանկյունի հատվածը համարժեք փոխանակում արվի. այսինքն՝ կա համաձայնություն, որ դիրքերի փոփոխություն չի լինելու»:

Սուրեն Պետրոսյանի խոսքով՝ Նիկոլ Փաշինյանը ոսկեպարցիներին նաեւ ասել է, որ Ոսկեպարի գնացող ալընտրանքային ճանապարհ կկառուցեն, սակայն բնակիչները չեն համաձայնվել. «Մարդիկ բնականաբար գլխի են ընկել, որ սա միակողմանի զիջման համար նախապատրաստական աշխատանք է:

Մարդիկ ասել են՝ դեմ ենք, թույլ չենք տա, Փաշինյանն էլ ասել է՝ լավ չենք կառուցի:

Նա ասել է նաեւ, որ դիրքերում երկու կողմից էլ սահմանապահներ կլինեն, այսինքն՝ բանակ չի լինի», -պատմեց քաղաքագետը:

Սուրեն Պետրոսյանը շեշտում է՝ երկու կարեւոր ուղերձ կա, որ պետք է արձանագրել. ոսկեպարցիներն այս պահի դրությամբ միանձնյա կարողացել են փոփոխել այս գործընթացը: Ճիշտ է, դա չի ավարտվել, բայց կասեցվել է. «Բոլորը իդեալական հասկանում են, որ սա խաբկանք է, փափուկ բարձ են դնում մարդկանց գլխի տակ, որ ժամանակ շահեն, մոռացության տան, որպեսզի հանրության հետ լավ աշխատանք տանեն, եւ մյուս անգամ նոր տարածքների հանձման դեպքում դիմադրություն չլինի, բայց փաստացի՝ ոսկեպարցիները խնդիր են լուծել»,-ասում է քաղաքագետը:

ՀԱՆՁՆԵԼ Է ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանին իր հավատարմագրերն է հանձնել Հայաստանում Հարավային Աֆրիկայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Շոայբ Կասուն (նստավայրը՝ Կիեւ):

Շնորհավորելով նորանշանակ դեսպանին պաշտոնը ստանձնելու կապակցությամբ՝ նախագահը նշել է. «Վստահ եմ, որ Ձեր նշանակումը լրացուցիչ լիցք կհաղորդի մեր երկու երկրների հարաբերություններին: Նաեւ առիթն օգտագործելով՝ ուզում եմ նախապես շնորհավորել Ձեզ եւ հարավաֆրիկյան ժողովրդին ապրիլի 27-ի՝ ձեզ համար շատ կարեւոր իրադարձության՝ Ազատության օրվա 30-ամյակի կապակցությամբ:

Ուզում եմ նաեւ մաղթել Ձեզ եւ ձեր ժողովրդին հաջողություններ, նոր ձեռքբերումներ, ինչպես նաեւ հետեւողականություն եւ կամք՝ ժողովրդավարական արժեքներն արմատավորելու եւ դեմոկրատիայի սկզբունքները դավանելու գործում»:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության եւ բարեմաղթանքների համար՝ դեսպան Կասուն ասել է. «Մեծապես ոգեւորված եմ այստեղ գտնվելու համար: Շնորհակալություն Ձեր կառավարությանը ջերմ ընդունելության համար: Արդեն իսկ շատ լավ հանդիպումներ եմ ունեցել արտգործնախարարության գործընկերների հետ: Ոգեւորված եմ իմ նշանակման կապակցությամբ եւ իմ բոլոր ջանքերը կներդնեմ մեր պետությունների հարաբերությունների ամրապնդման համար»:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի եւ ՀԱՀ միջեւ տարբեր ոլորտներում համագործակցության խթանման ուղիներին առնչվող հարցեր:

Անդրադարձ է կատարվել երկու երկրների միջեւ մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման հնարավորություններին, ինչը կնպաստի տնտեսական, գործարար, զբոսաշրջության եւ այլ ոլորտներում համագործակցության զարգացմանը:

Զրույցի ընթացքում մտքեր են փոխանակվել տարածաշրջանային իրադրության եւ զարգացումների վերաբերյալ: Այս համատեքստում նախագահ Վահագն Խաչատուրյանը վերահաստատել է Հայաստանի միանշանակ դիրքորոշումը՝ կայուն եւ հարատեւ խաղաղության հասնելու եւ հարեւանների հետ խաղաղ համակեցության ու բարիդրացիության սկզբունքներով հարաբերություններ կառուցելու վերաբերյալ:

ՈՎ Է ՊԱՏԱՍԽԱՆ ՏԱԼՈՒ

ԽՈՇՏԱՆԳՎԱԾԻՆ ՈՒԶՈՒՄ ԵՆ ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼ

Հայաստանի իշխանություններն ահաբեկում են ընդդիմադիր հայացքներ ունեցող քաղաքացիներին, որպեսզի որեւէ մեկի մտքով չանցնի քննադատել իշխանական գործիչներին:

Ասվածի վառ ապացույցը ապրիլի 15-ի միջադեպին իշխանության տված արձագանքն է:

Հիշեցնենք, որ երիտասարդ Սամվել Վարդանյանը հանրային տրանսպորտում վիրավորել էր ՔՊ խմբակցության պատգամավոր Հակոբ Ասլանյանին՝ անվանելով «հակահայ վիժվածք», «ժեխ բիձա» եւ «դավաճան»: Դեպքից անմիջապես հետո ArmLur.am-ը զրուցել էր Հակոբ Ասլանյանի հետ, որը հայտնեց, որ բողոք չունի. «Ջահել, հիմար տղա էր, ի՞նչ բողոքեմ»:

Սակայն, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, որ թքել էր քաղաքացու դեմքին, ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը, որ սպառնում էր ընդդիմադիր ՄԻՊ թեկնածուի ականջները կտրել, շտապեցին դատապարտել եւ քննչական մարմիններին ուղղորդեցին, որ երիտասարդին խիստ պատժի պետք է արժանացնեն: Նրանց հայտարարություններից հետո ՔՊ պատգամավոր Հակոբ Ասլանյանը հետ կանգնեց իր մտքից, ոստիկանությունում բողոք գրեց ընդդիմադիր երիտասարդի վրա, ինչից հետո երիտասարդին ձերբակալեցին:

Բացի իրավական կոշտ մեթոդներից, Սամվել Վարդանյանի նկատմամբ նաեւ խոշտանգում է տեղի ունեցել մեկ օր առաջ՝ ՀՀ ոստիկանության օրը: Այսպիսով՝ ապրիլի 16-ի գիշերը, երբ երիտասարդին քննչական ծառայությունից ՁՊՎ են տեղափոխել, ոստիկանական ավտոմեքենան մութ մի տեղ կայանել է՝ ոստիկանների բնական կարիքները հոգալու անհրաժեշտությամբ: Սամվելը ձեռնաշղթաներով եղել է ավտոմեքենայի մեջ, ում ոստիկանները թողել են միայնակ եւ իջել են ավտոմեքենայից՝ իրենց պահանջներով:

Հանկարծ ավտոմեքենայի դուռը բացել են ամբողջությամբ սեւ հագած դիմակավորված անձինք, մեքենայից դուրս են հանել շղթայված Սամվել Վարդանյանին, մի քանի մետր այն կողմ են տարել՝ խոտերի մեջ, նրան չոքեցրել, գլուխը հարվածել են գետնին: Ըստ փաստաբան Վարազդատ Հարությունյանի՝ ըստ երեւույթին՝ Սամվելի ճակատի ուռած մասը հենց դրա հետեւանքն է եղել:

Սկսել են ձեռքերով հարվածել նրան: Այդ ամբողջ գործընթացը ուղեկցվել է սեռական բնույթի հայհոյանքներով, վերջին խոսքերով: Ընդ որում, ծեծողները պահանջել են Սամվելից, որ կրկնի իր նկատմամբ սեռական բնույթի հայհոյանքները: Այնուհետեւ, չոքած վիճակում նրան պահելով՝ ձեռքերը՝ հետեւի կողմից ձեռնաշղթայված, տաբատը իջեցրել են, փայտը կամ դուբինկան դեմոնստրատիվ պահել են ոտքերի արանքում՝ այդպիսով ցանկանալով ինչ-որ բան ցուցադրել, սպառնալ կամ վախեցնել: Իսկ արդեն վերջում 3-4 հոգին թքել են նրա վրա ու բերել, շպրտել ավտոմեքենայի մեջ: Մեկ րոպե անց բնական կարիքները հոգալուց հետո վերադարձել են ուղեկցող ոստիկանները եւ շարունակել ճանապարհը՝ ասես աչինչ չի եղել:

Այսօր արդեն պարզ դարձավ, որ Սամվել Վարդանյանին այսքանից հետո առաջադրվել է մեղադրանք ոչ միայն խուլիգանության, այլեւ քաղաքական հայացքներով պայմանավորված՝ թշնամանք հրահրելու (լուսահոգի Արմեն Գրիգորյանի հոդվածով, որը մահացավ դատարանի դահլիճում՝ կալանքի տակ): Այսինքն՝ նպատակ կա կալանավորելու խոշտանգված երիտասարդին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆԸ՝ Miloserdie-Ի ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

Բարեգործությանը նվիրված Miloserdie պորտալն օրերս նշվող Մեկենասի եւ բարեգործի օրվա առիթով հրապարակում է պատրաստել հինգ արտասովոր անձանց մասին, որոնք ամեն ինչ արել են՝ աշխարհն ավելի լավը դարձնելու համար՝ չվախենալով հրաժարվել իրենց հարստությունից:

Հինգ բացառիկ բարեգործների թվում է նաեւ մեր հայրենակից, ադրբեջանական իշխանությունների կողմից ապօրինի ձերբակալված եւ Բաքվի բանտում պահվող Ռուբեն Վարդանյանը, որը ներկայացվել է որպես Հայաստանի, Ռուսաստանի եւ համաշխարհային մեկենաս: Այս առնչությամբ հոդվածի հեղինակը գրում է. «Ռուբեն Վարդանյանը մնաց շրջափակված Լեռնային Ղարաբաղում, այն հողի վրա, որի ճակատագրի շուրջ Հայաստանն ու Ադրբեջանը չեն կարողանում պայմանավորվել, այնուհետեւ գերեվարվեց Ադրբեջանի իշխանությունների կողմից: 2024 թվականի ապրիլին Ռուբեն Վարդանյանին առաջադրել են Խաղաղության Նոբելյան մրցանակի՝ այդպիսով գնահատելով բարեգործության մեջ ունեցած նրա ակնառու ներդրումը»: Նշելով, որ Ռուբեն Վարդանյանը դեռեւս 90-ականների կեսերին էր իր ջանքերն ուղղել սոցիալական ձեռներեցության, մեկենասության եւ բարեգործության զարգացմանը, պորտալը մեջբերել է սոցիալական պատասխանատվության մասին հենց Վարդանյանի խոսքերը. «Առանց սոցիալական պատասխանատվության չի կարող բիզնես լինել: Բիզնեսը չպետք է նախ կործանի աշխարհը, հետո գումարներ ծախսի այդ աշխարհը վերականգնելու համար... Այն կարգավորումը, թե «ես հարկ եմ վճարում, ուրեմն ես լուծում եմ խնդիրների մի մասը», այլեւս չի աշխատում»:

Հոդվածում հիշատակվում են նաեւ Ռուբեն Վարդանյանի կողմից իրականացված ծրագրերը. «Ռուբեն Վարդանյանի՝ ապագա գործընթացները կանխազգալու տաղանդի շնորհիվ Դիլիջանում բացվեց տաղանդավոր երեխաների համար դպրոց, որտեղ ձգտում են սովորել դպրոցականներ ամբողջ աշխարհից, ինչը նաեւ զբոսաշրջությունը զարգացնելու խթան էր: Նրա ֆինանսական միջոցներով է կառուցվել աշխարհի ամենաերկար ճոպանուղին՝ «Տաթեւերը», որը տանում է դեպի Տաթեւի միջնադարյան վանական համալիր: «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակը, որը նախատեսված է բազմաթիվ մարդկային կյանքեր փրկած անձնվեր մարդկանց եւ իրավապաշտպանների համար, Վարդանյանի ամենահայտնի նախագիծն է»: Ռուբեն Վարդանյանից բացի՝ անցյալի ու ներկայի հինգ լեգենդար բարեգործների թվում են նաեւ ամերիկացի Չառլզ Ֆինին, որը հսկայական գումար՝ ութ միլիարդ դոլար է նվիրաբերել բարեգործությանը, ամերիկացի լեգենդար ալպինիստ, Patagonia ապրանքանիշի հիմնադիր, 85-ամյա միլիարդատեր Իվոն Շուինարն անձամբ է հետեւում, որ իր երեք միլիարդ դոլար արժողությամբ ընկերության շահույթն ուղղվի բնապահպանական ոլորտի բարեգործությանը: Պարբերականն ընտրել է նաեւ 19-րդ դարի ռուս գործարար Ինոկենտի Սիբիրյակովին, որն իրեն անարժան է համարել այն հարստությանը, որը ժառանգություն է ստացել հորից. ուստի, իր պարտքն է համարել այդ փողերը նվիրաբերել նրանց, ովքեր, իրոք, դրա կարիքն ունեն: Շարքում է ընդգրկվել նաեւ 19-րդ դարի մեկ այլ ռուս վաճառական՝ միլիոնատեր Ֆլոր Երմակովը, որն անձնական ողբերգությունից հետո վաճառում է իր տեքստիլ արտադրության գործարաններն ու այդ գումարով կառուցում անկելանոցներ, որբանոցներ, հիվանդանոցներ ու բարեգործական ճաշարաններ:

ԴՈՒՍՏՐԸ ՊԱՏԻԺ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ

ՆԱԽԱՐԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ՝ ԱՆՎԱՎԵՐ

Ինչպես հայտնի է, վարչական դատարանը ոչ իրավաչափ էր ճանաչել առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյան հրամանով փոփոխված՝ կորոնավիրուսային հիվանդությամբ բուժառուների բժշկական օգնության եւ սպասարկման կազմակերպման կարգը սահմանող որոշ կարգավորումներ:

Այս տարվա մարտի 14-ին վերաքննիչ դատարանը որոշել է առողջապահության նախարարության վերաքննիչ բողոքն ամբողջությամբ մերժել եւ անփոփոխ թողնել վարչական դատարանի 2022 թվականի որոշումը, որով, փաստորեն, նախարարի վիճելի հրամանները անվավեր եւ ոչ իրավաչափ են ճանաչվել:

Ա. Հայրապետյանը, որի հայրը 2020 թվականին մահացել է կորոնավիրուսից, դիմել էր դատարան՝ վիճարկելու առողջապահության նախարարի հրամանը, որով խմբագրվել է կորոնավիրուսային հիվանդությամբ բուժառուների բժշկական օգնության եւ սպասարկման կազմակերպման կարգը եւ սահմանվել՝ «...Առողջության առաջնային պահպանման հաստատության աշխատաժամերից դուրս եւ ոչ աշխատանքային օրերին հաստատված COVID-19 պացիենտի առողջական վիճակի կտրուկ վատթարացման դեպքում պացիենտը կամ ընտանիքի անդամը կանչ է տալիս շտապ բժշկական օգնության ծառայությանը: Ընդ որում՝ պացիենտը հոսպիտալացվում է, եթե առկա է մարմնի ջերմաստիճանի բարձրացում՝ 38.5՝C 3 օր եւ ավելի, եւ/կամ արյան թթվածնով հագեցվածությունը SpO2 <93% եւ/կամ շնչառության հաճախությունը >22/րոպե»:

Ա. Հայրապետյանի՝ դատարանին ներկայացրած փաստարկների համաձայն՝ առողջապահության նախարարի 10.04.2020 թվականի թիվ 1239-Ա հրամանի՝ 2020թ. հունիսի 16-ի դրությամբ գործող խմբագրությամբ 5, 6-րդ կետերը թույլ չեն տվել հոսպիտալացնել այն անձանց, որոնց մոտ առկա չի եղել մարմնի ջերմաստիճանի բարձրացում 38.5՝C 3 օր եւ ավելի եւ/կամ արյան թթվածնով հագեցվածությունը SpO2 <93% եւ/կամ շնչառության հաճախությունը >22/րոպե, փոխարենը՝ նրանք ուղղորդվել են քաղաքային պոլիկլինիկաներ, որտեղ, սակայն, չի տրամադրվել բուժառուներին որակյալ բուժօգնություն:

Արդյունքում՝ դիմողի հայրը, ունենալով կորոնավիրուսային հիվանդություն, չի ստացել որակյալ բուժօգնություն, ինչի պատճառով մահացել է: Ընդ որում, առողջապահության նախարարի՝ 21.05.2020 թվականի թիվ 1606-Ա հրամանով հաստատված «Արտահիվանդանոցային պայմաններում կորոնավիրուսային հիվանդությամբ բուժառուների բժշկական օգնության եւ սպասարկման կազմակերպման կարգի»՝ 2020թ. հունիսի 16-ի դրությամբ գործող խմբագրությամբ 1-ին եւ 2-րդ կետերը չեն սահմանել կորոնավիրուսային հիվանդության կասկածելի դեպք հայտնաբերելիս նմուշառում կատարելու հստակ ժամկետներ: Սրա արդյունքում՝ Հայրապետյանի հորը նմուշառել են միայն 2020 թվականի հունիսի 19-ին՝ այն պայմաններում, երբ կանչը տրվել է հունիսի 16-ին, իսկ հոսպիտալացրել են միայն հունիսի 23-ին: Եվ ահա, մահացած տղամարդու դուստրը՝ Արուսյակ Հայրապետյանը ուշագրավ հայտարարություն է անում:

«Հորս մահից հետո՝ 2020 թվականին, դատական պրոցես է սկսվել երկու հայցադիմումով՝ ՀՀ Առողջապահության նախարարության եւ «Մեդլայն» կլինիկայի դեմ: Ջուգահեռ՝ հարուցվել է քրեական գործ: Թեման այսօր նորից թարմացել է, որովհետեւ սույն թվականի մարտի 14-ին ՀՀ վարչական դատարանը ոչ իրավաչափ է ճանաչել ԱՆ՝ այդ ժամանակվա նախարարի կողմից պարտադրված որոշ կարգավորումներ: Բոլորս գիտենք, որ բժշկությունը ճշգրիտ գիտություն չէ, հատկապես՝ համաճարակի ժամանակ, հատկապես՝ նորահայտ վիրուսների դեպքում: Դրան հակառակ՝ կառավարումը, նամանավանդ՝ պետական կառավարումը, հանրային կյանքին վերաբերող հարցերի կազմակերպումը՝ հստակ գիտելիքներ, որակներ ու պրոֆեսիոնալիզմ պահանջող զբաղմունք է ու երբ դրանով զբաղվում են անպատասխանատու եւ սիրողական մակարդակի անհատներ, քաղաքացին դրա ուղղակի կամ կոլատերալ զոհն է դառնում:

ՀՀ ում միշտ եղել են ու կան պետական պաշտոնների նստած մարդիկ, որոնք ծառայում են բացառապես սեփական, անհատական, ընկերական կամ թայֆայական շահերին ու երբեք՝ հանրայինին, երբեք՝ քաղաքացու շահին: Հայրս այս արատավոր ֆենոմենի բազմահազար զոհերից մեկն է միայն: Այս պրոցեսը վատ կառավարման մասին է եւ հստակ ցուցադրում է, որ ՀՀ ում պետական պաշտոնյան կարող է ամբողջովին տապալել իր առաքելությունը, բայց մնալ ոչ միայն բացարձակ անպատիժ, քանզի պատասխանատվության ինստիտուտը պաշտոնյաների վերաբերյալ բացարձակ բացակայում է, այլ նաեւ այլ պաշտոնի նշանակվել եւ հանգիստ շարունակել վնաս տալ հիմա էլ մեկ այլ ոլորտում:

Որեւէ ժողովրդավարություն, ուր պետական պաշտոնյան, հանրային ծառայողն անպատիժ է, ինչ էլ անի, գրոշի արժեք չունի: Ու այս պրոցեսի դրդապատճառը իմ, ինչպես նաեւ այս գործով արդեն չորս տարի բացարձակ անշահախնդիր կերպով զբաղվող երեք հրաշալի մասնագետ իրավաբան-փաստաբաներինը նույնն է՝ խորքային համոզմունք, որ մենք ճիշտ ենք եւ անհատական որոշում՝ չլռել, երբ ՀՀ քաղաքացու կյանքի իրավունքի դեմ պետական մակարդակի անպատասխանատվության պատճառով ոտնձգություն է կատարվում:

Այդպես էր նախկին ռեժիմի օրոք, երբ ՀՀ ում կային բազմաթիվ քաղբանտարկյալներ, այդպես է փաշինյանական խմբակի կառավարման օրոք, երբ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անվտանգություն, պետականությունը ուղղակի են վտանգվում՝ անկարող եւ բացարձակ անպատասխանատու կառավարման հետեւանքով»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐՏՈՆՅԱԼ ԴԱՏԱՎՈՐ

Ո՞ՒՄ Է ՄԱԿԱԳՐՎԵԼ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԿԱԼԱՆՔԻ ԳՈՐԾԸ

ՔՊ դատգամավոր Հակոբ Ալանյանի հետ միջադեպի գործով ձերբակալված Սամվել Վարդանյանի կալանքի գործը մակագրվել է դատավոր Ժորա Չիչոյանին եւ դատելով իրավիճակից՝ նրա կալանքը անխուսափելի է:

Ինչպես հայտնի է, դատավոր Ժորա Չիչոյանը կալանքի որոշում կայացրեց 44-օրյա պատերազմում զոհված զինծառայող Ժորա Մարտիրոսյանի մոր՝ Գայանե Մարտիրոսյանի մասով, երբ նա վարչապետ Նիկոլ Փաշինյանի որդուն՝ Աշոտ Փաշինյանին, նստեցրել էր մեքենան, որ զրուցեն, ու այն վարել էր՝ նշելով, թե ցանկանում էին գնալ «Եռաբլուր»:

Ժորա Չիչոյանը դատավոր է դարձել 2022թ. սեպտեմբերի 22-ին. նախկին դատախազ է: ՀՀ նախագահն առարկություն էր ներկայացրել Ժորա Չիչոյանին դատավոր նշանակելու մասով Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհուրդ, որը ԲԴԽ-ն ընդունել էր ի գիտություն. սակայն ԲԴԽ-ում դատավոր հորեղբոր՝ Սերգեյ Չիչոյանի եւ իր հոր՝ Շիրակի մարզի դատախազ Արմեն Չիչոյանի գործուն ջանքերով՝ ԲԴԽ-ն հաշվի չառավ նախագահի առարկությունը, Ժորա Չիչոյանին նշանակեց դատավոր:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ՌԴ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԿՐԱԿԵԼ Է ԽԱՆՈՒԹՊԱՆԻՆ

Քննչական կոմիտեի՝ Արարատի մարզային քննչական վարչության Վեդիի քննչական բաժնում իրականացվող քննությամբ պարզվում են նույն մարզի 47-ամյա բնակչի առողջությանը հրազենի գործադրմամբ վնաս պատճառելու դեպքի հանգամանքները:

2024 թվականի ապրիլի 12-ին «Արարատի հիվանդանոց» ԲԿ-ից ահազանգ է ստացվել, որ ոտքին հրազենային վնասվածքով իրենց մոտ բուժօգնության է դիմել 47-ամյա տղամարդ:

Ավելի ուշ պարզվել է, որ վերջինս վնասվածքը ստացել է Արարատ գյուղում գտնվող իր խանութի մոտ հնչած կրակոցների հետեւանքով:

Դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթով կատարված դեպքի վայրի զննությամբ՝ հիշյալ խանութի հետնամասից հայտնաբերվել եւ վերցվել են կրակված 2 պարկուճներ:

Իրականացված նախաքննությամբ պարզվել է, որ Արարատի մարզի բնակչին առերեւույթ մարմնական վնասվածքներ է պատճառել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող 34-ամյա մի տղամարդ:

Վերջինս, ըստ ձեռք բերված նախնական տվյալների, 2024 թվականի ապրիլի 12-ին՝ ժամը 11:00-ից 12:00-ն ընկած ժամանակահատվածում, Արարատի մարզի բնակչին հանդիպելու պատրվակով, որպես հաճախորդ գնացել է նրան պատկանող խանութ, ապա անձնական հարցերի շուրջ պարզաբանումներ ստանալու համար՝ նրա հետ քայլել խանութի հետնամաս:

Այնտեղ տեղի ունեցած խոսակցության ժամանակ տղամարդը, քննությամբ դեռեւս չպարզված հանգամանքներում ձեռք բերված եւ իր մոտ ապօրինի պահվող ակոսափող ատրճանակով 2 անգամ կրակել է Արարատի մարզի բնակչի ոտքերի ուղղությամբ՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Նույն օրը ձեռնարկված քննչական, ինչպես նաեւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում՝ 34-ամյա տղամարդը ձերբակալվել է «Զվարթնոց» օդանավակայանում ՀՀ տարածքը լքելու պահին, եւ ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին:

Հայտնաբերվել եւ առգրավվել է նաեւ առերեւույթ հանցագործության գործիք հանդիսացող «SS» տեսակի ատրճանակը:

Ձեռք բերված բավարար փաստական տվյալների հիման վրա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել:

Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, ինչը հետագայում փոխարինվել է տնային կալանքով եւ գրավով:

Նախաքննությունը շարունակվում է:

Միջոցառումներ են ձեռնարկվում դեպքի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ գործադրված հրազենի ձեռքբերման աղբյուրը պարզելու ուղղությամբ:

Ք.ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 16-ից 17-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 76 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՓՈՔՐ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Տավուշի մարզպետարանի տվյալներով՝ մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողային հաշվեկշռի, կազմում են 110 665,6 հեկտար, որից վարելահող՝ 25 485,3 հեկտար, բազմամյա տնկարկներ՝ 1981,8 հեկտար, այդ թվում՝ խաղողի այգիներ՝ 1195,3 հեկտար, պտղատու այգիներ՝ 786,5 հեկտար, խոտհարքներ՝ 9400,6 հեկտար, արոտավայրեր՝ 63 006 հեկտար, այլ՝ 10791,8 հեկտար: Մարզում ոռոգելի հողատարածքները կազմում են 6779,9 հեկտար, որից տնամերձեր՝ 1215,8 հեկտար: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարում էր, որ Հայաստանում պետք է ավելացնել կաթիլային եղանակով ոռոգվող հողերի քանակը: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին «Ժողովուրդ» օրաթերթը հարցում է ուղարկել՝ ճշտելու, թե Տավուշի մարզի հողերում, այգիներում ներկայումս կարկտապաշտպան որքա՞ն մակերեսով ցանց կա տեղադրված, որքա՞ն հեկտար տարածք է ոռոգվում կաթիլային եղանակով: Մարզպետարանից պատասխանել են, որ Տավուշի մարզի հողերում, այգիներում տեղադրված է կարկտապաշտպան 9 հեկտար ցանց, կաթիլային եղանակով ոռոգվում է 130 հեկտար տարածք: Դրանք փոքր ցուցանիշներ են:

Ո՞Վ ՊԵՏՔ Է ՏՈՒԳԱՆՔԸ ՆՇԱՆԱԿԻ

Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի Դիլիջան-Իջևան հատվածում ամեն օր կարելի է տեսնել առանց հսկողության արածող կովերի նախիրներ, ձիերի երամակներ: Այդ կենդանիները հաճախ հայտնվում են ճանապարհի երթևեկելի մասում, ստեղծում վթարային իրավիճակներ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողը տեղեկատվական հարցում է ուղարկել՝ նշելով. «Տարիներ շարունակ միջպետական ավտոճանապարհի Դիլիջան-Իջևան հատվածում թափառում են կովերի նախիրներ, ձիերի երամակներ՝ ճանապարհին ստեղծելով վթարային իրադրություններ, Տավուշի մարզպետարանը եւ անձամբ Դուք ի՞նչ եք ձեռնարկել այդ երեւույթի դեմ: Մարզպետարանից պատասխանել են.

«Համաձայն ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 150.2 հոդվածի՝ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների երթեւեկելի մասով եւ բաժանարար գոտիով անասուններ քշելը, ճանապարհի պաշտպանական գոտում առանց մշտական հսկողության անասուն արածեցնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի չափով: Սակայն, համաձայն նույն օրենսգրքի 219.1 հոդվածի՝ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության մեջ չի մտնում 150.2 հոդվածով նախատեսվածը»: Հարց է ծագում՝ ո՞ր մարմինների իրավասության մեջ է մտնում 150.2 հոդվածով նախատեսված տուգանքի նշանակումը;

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԵԽԽՎ ՆԻՍՏ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԸՆԹԱՑԸ՝ ԿԱՐԵՎՈՐ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվիրակությունը մասնակցել է Ստրասբուրգում ընթացող Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ)՝ տարեկան նստաշրջանի երկրորդ մասի աշխատանքներին:

Նիստի շրջանակներում ելույթ է ունեցել ՀՀ ԱԺ պատգամավոր Վլադիմիր Վարդանյանը:

Նա իր ելույթում մասնավորապես նշել է. «Պարոն նախագահ, հարգելի՛ գործընկերներ,

Այս տարի մենք նշում ենք Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 75-ամյակը, որի գոյության փաստն իսկ էապես բարելավել է ժողովրդավարական միջավայրը մեր մայրցամաքում:

«Եվրոպա» եզրույթն ինքնին դիտարկվում է որպես որակի ցուցիչ բոլոր հարթություններում՝ ներառյալ կյանքի, շրջակա միջավայրի, անվտանգության եւ, իհարկե, ժողովրդավարության որակը:

Եվրոպայի խորհրդի անդամ երկիր լինելու արտոնությունը ժողովրդավարության բարձր որակի, մարդու իրավունքների եւ իրավունքի գերակայության նկատմամբ լիարժեք հարգանքի վկայությունն է: Միեւնույն ժամանակ, այդ արտոնությունը երկնքից իջած բարիք չէ, եւ կազմակերպության յուրաքանչյուր անդամ երկիր պետք է ամենօրյա ջանք գործադրի՝ պահպանելու մեր հիմնարար արժեքներին համապատասխանող ժողովրդավարության մակարդակը:

Ժողովրդավարությունը մի երեւույթ է, որը մշտապես բախվել եւ բախվում է մարտահրավերների, հատկապես՝ այսօր, երբ մենք ականատես ենք լինում ագրեսիայի, պատերազմների խժդժություններ, ճգնաժամերի եւ անկայունության ամենահասարսուռ դրսեւորումներին, ինչպես Եվրոպայի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Այստեղ՝ Եվրոպայի խորհրդում, մենք պետք է գործենք այն գիտակցմամբ, որ ժողովրդավարական խաղաղությունը պարտադիր պայման է իրավունքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական հասարակություն կառուցելու եւ պահպանելու համար:

Ժողովրդավարական խաղաղությունը նաեւ, առանց որեւէ խտրականության, մարդու իրավունքների լավագույն պաշտպանության նախապայմանն է:

Տիկնա՛յք եւ պարոնա՛յք, մենք ապրում ենք վիթխարի տեխնոլոգիական առաջխաղացման դարաշրջանում: Թվային դարաշրջանը կտրուկ փոփոխել է մեր կյանքը՝ բացելով նոր հեռանկարներ եւ հնարավորություններ՝ միեւնույն ժամանակ բերելով իր հետ նոր մարտահրավերներ, սպառնալիքներ եւ խոչընդոտներ:

Մենք չենք կարող եւ չպետք է հակադարձենք տեխնոլոգիական առաջընթացին, բայց մենք ունենք համընդհանուր պարտավորություն՝ տեխնոլոգիական զարգացումները ծառայեցնել ժողովրդավարության առաջընթացին, եւ, հետեւաբար, մեր առաքելությունն է ապահովել ժողովրդավարական միջազգային իրավական հիմք տեխնոլոգիական զարգացումների՝ ներառյալ արհեստական բանականությամբ տեխնոլոգիաների կարգավորման համար:

Հարգելի՛ գործընկերներ, վերջին 75 տարիների ընթացքում մենք մշակել ենք ժողովրդավարության տարբեր հաջողված մոդելներ՝ հիմնված մեր հիմնարար արժեքների վրա: Այնուամենայնիվ, մենք չենք կարող ժխտել տարբեր անդամ պետություններում ժողովրդավարությունից նահանջելու խնդիրը:

Ժողովրդավարությունից նահանջը մտահոգիչ հիմնախնդիր է մեր կազմակերպության համար, եւ մենք չպետք է թերագնահատենք մեր բոլորի վրա վերջինիս ունեցած ազդեցությունը:

Մենք պետք է ակտիվորեն դիմակայենք դրան եւ ժողովրդավարությունից նահանջի նկատմամբ կիրառենք արժեքների, այլ ոչ թե իրական քաղաքականության վրա հիմնված մոտեցում՝ հավասար վերաբերմունք դրսեւորելով ժողովրդավարությունից նահանջող բոլոր երկրների նկատմամբ:

Տիկնա՛յք եւ պարոնա՛յք, մեր կազմակերպության նպատակն է նպաստել իրական ժողովրդավարության կառուցմանը, այլ ոչ թե արհեստական, կեղծ, անվանական կամ այլ փոխարինորդների ձեւավորմանը, որտեղ ժողովրդավարությունն օգտագործվում է որպես շղարշ՝ ավտոկրատ ռեժիմները եւ նրանց իրավախախտումները քողարկելու համար:

Ուստի, մեր առաքելությունը ժողովրդավարությունից նահանջելու վաղ կանխարգելման իրական մեխանիզմների մշակումն է ու ամբողջ Եվրոպայում իրական ժողովրդավարության կայացմանը նպաստելը»,- եզրափակել է Վարդանյանը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՅՈՒՆԵՍԿՕ

ՆՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆ ԿԱՐՈՂ Է ՀԱՅՏՆՎԵԼ

Տիրինկատար լեռան վրա գտնվող վիշապաքարերը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության նախնական ցանկում ընդգրկելու նպատակով հայտ է պատրաստվել. այն նախնական ցուցակում ներառելու կամ չներառելու որոշումը կկայացվի ամռանը:

«Հայաստանի եւ Արցախի պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության խոչընդոտներն ու հնարավորությունները» թեմայով քննարկման ժամանակ այս մասին հայտնեց ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության պետ Հարություն Վանյանը:

«Հայաստանում մոտ 24 հազար գրանցված հուշարձան կա: Եթե գումարենք նաեւ նորահայտ հուշարձանները, ստացվում է՝ մոտ 25 հազար: ՅՈՒՆԵՍԿՕ-ում գրանցված հայկական մշակութային 3 հուշարձանախմբեր կան՝ Սանահինի եւ Հաղպատի վանական համալիրները, Գեղարդի վանքը՝ Ազատ գետի հովիտով, ու Էջմիածինը՝ իր եկեղեցիներով եւ Զվարթնոց հնավայրով: Եվս 4 հուշարձանախմբեր ընդգրկված են նախնական ցանկերում՝ Դվին հնավայրը, Նորավանքն ու Ամաղուի ձորահովիտը, Երերույքի տաճարը, Տաթեւ վանական համալիրն ու Տաթեւի անապատը»,-ներկայացրեց Վանյանը:

Այս բոլոր գրանցումները կատարվել են 1998-2000 թվականներին: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կարգավորումներից մեկն է այն, որ մինչեւ հուշարձանը չի ընդգրկվում նախնական ցանկում, չի կարող տեղափոխվել հիմնական ցանկ. դա առաջին քայլն է: Իսկ նախնական ցանկերը չեն թարմացվել՝ սկսած 1995 թ.-ից: Այս ցանկը 28 տարի անց, գուցե, ավելանա նոր անունով:

«Նախորդ տարվանից սկսել ենք նոր գործընթաց՝ այս աշխատանքը շարունակելու համար: Տիրինկատար լեռան վրա գտնվող վիշապաքարերը ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության նախնական ցանկում ընդգրկելու նպատակով պատրաստվել է հայտ՝ որպես Հայկական լեռնաշխարհին բնորոշ բացառիկ մշակութային երեւույթ, որը այլ տեղ չի հանդիպում: Այս ամռանը նախնական ցանկում ներառելու կամ չներառելու մասին որոշումը կլինի»,- տեղեկացնում է նախարարության ներկայացուցիչը:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար. 1 մարդ զոհվել է, 17-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԵՑՎԵԼ Է

Լաբորատոր փորձաքննության արդյունքում հայտնի է դարձել, որ «Հայրենյաց Բարիքներ» պահածոների արտադրամասը թողարկել է վտանգավոր սննդամթերք: Այս մասին հաղորդագրություն է տարածել Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը:

«Ինչպես արդեն տեղեկացվել է, իրավական ակտերով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերի խախտումների հիմքով կասեցվել է «Հայրենյաց Բարիքներ» ՍՊԸ-ին պատկանող պահածոների արտադրամասի արտադրական գործունեությունը:

Ստուգման ընթացքում նմուշներ են վերցվել առկա պատրաստի արտադրանքից եւ ներկայացվել լաբորատոր փորձաքննության:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է դիպլոմ, որը պատկանում է Հայկանուշ Յուրիի Դավթյանին: Դիպլոմը տրված է 01.07.2003թ.-ին Երեւանի պետական համալսարանի կողմից (դիպլոմի համարը՝ 010845, գրանցման համարը՝ 74530):

Կորել է Երեւան քաղաքում: Գտնելու դեպքում խնդրում ենք կապ հաստատել 094-667-030 հեռախոսահամարով՝ վերադարձնելու համար:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է «Քիշ Գարդեն» ՍՊԸ-ի՝ Արմավիրի մարզի Ակունք համայնքի Ակունք գյուղի վարչական տարածքում գյուղատնտեսական /ոռոգում 42,0 հա / նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 60,6 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից 18:00-ն, դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա

2024 թվականի ապրիլի 23-ին՝
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

ժամը 16:00-ին: Հասցե՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՈԼՈՐՏԸ ՊԵՏՔ Է ԲՆԱԿԱՆՈՆ ԶԱՐԳԱՆԱ

Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Եղիազար Վարդանյանը հանդիպել է Կառուցապատողների հայկական ասոցիացիայի խորհրդի անդամների հետ:

Եղիազար Վարդանյանն ընդգծել է, որ որպես կոմիտեի առանցքային գործընկեր՝ կարեւորում է ասոցիացիայի հետ համագործակցության խորացումը՝ ոլորտային հարցերի վերհանման եւ արդյունավետ լուծումների մշակման առումով: «Առաջարկում եմ համատեղ աշխատել՝ հրատապ խնդիրների շրջանակը որոշելու եւ օր առաջ լուծելու ուղղությամբ՝ զուգահեռաբար մշակելով ոլորտի բարեփոխման հետագա քայլերը: Մեր ցանկությունն ու վճռական մոտեցումն է՝ ապահովել բնակավառի բնականոն զարգացման հնարավորությունը՝ վերացնելով խոչընդոտները, միաժամանակ գնահատելով հնարավոր ռիսկերն ու մարտահրավերները»,-վստահեցրել է Քաղաքաշինության կոմիտեի նախագահը:

Կառուցապատողները շնորհակալություն են հայտնել Եղիազար Վարդանյանին պատրաստակամության եւ ոլորտի դերակատարների հետ երկխոսությունը գործնական հարթակում պահելու համար: «Ծանոթ լինելով դեռեւս որպես Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտոր Ձեր մոտեցմանը, այն է՝ գիտական միտքը ծառայեցնել պրակտիկ գործունեությանը՝ լիահույս ենք, որ կոմիտեի հետ մինչ այս ձեւավորված բարձր մակարդակի գործընկերությունը նոր լիցք կստանա: Ասոցիացիան պատրաստ է համագործակցել ոլորտի մարտահրավերների հաղթահարման գործում»,-նշել է Կառուցապատողների հայկական ասոցիացիայի նախագահ Գուրգեն Գրիգորյանը:

Ուրվագծելով հիմնական առաջնահերթությունները՝ կոմիտեի նախագահն առանձնացրել է հողամասի նպատակային նշանակության փոփոխության գործընթացի թվայնացումը, համալիր փորձաքննության կազմակերպման ձեւի եւ բովանդակության վերանայումն ու հստակեցումը, ինչպես նաեւ քաղաքաշինական թվային կադաստրի ձեւավորումը, որոնց առաջիկայում ձեռնամուխ է լինելու կոմիտեն: Նա նշել է, որ բարեփոխումներն ամբողջ ծավալով իրականացնելիս անհրաժեշտ կլինի փոփոխություններ կատարել քաղաքաշինական գործընթացները կարգավորող իրավական ակտերում:

Հանդիպման ընթացքում, ի թիվս մի շարք կարեւոր հարցերի, դիտարկվել է նաեւ կառուցապատողների հնարավոր ներգրավումը Հայաստանում Ֆրանկոֆոնիայի 10-րդ խաղերի կազմակերպման շրջանակում բնակելի ավանի ստեղծմանը, ինչպես նաեւ քննարկվել է ԼՂ-ից բռնի տեղահանված հայրենակիցներին ժամանակակից տեխնոլոգիաներով արագ կառուցվող տներով ապահովելու գաղափարը:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ»-Ը՝ ARMMONO-Ի ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ

«ՎՏԲ-Հայաստան» բանկն աջակցել է ARMMONO 22-րդ ամենամյա միջազգային փառատոնին, որն այս տարի անցկացվում է Երեւանում՝ ապրիլի 17-ից մայիսի 3-ը: Ծրագրում ընդգրկված են տարբեր ժանրերի ավելի քան 20 հայկական եւ արտասահմանյան մոնոներկայացում՝ մոնոդրամա, մոնոստենդափ:

Ներկայացումները տեղի կունենան Երեւանի թատերական տարբեր դահլիճների բեմերում՝ 50 դերասանների մասնակցությամբ: Արտասահմանյան բեմադրություններից հանդիսատեսին կցուցադրվեն «Մոնոկլ» մոնոներկայացումների միջազգային փառատոնի հաղթող ճանաչված երկու ռուսական ներկայացումներ եւ մեկ ներկայացում Բելառուսից: Փառատոնի շրջանակներում նախատեսված են նաեւ Ռուսաստանից ժամանած հայտնի արտ-մենեջերների, ռեժիսորների եւ դերասանների վարպետության դասեր:

«Մենք ուրախ ենք աջակցելու ARMMONO փառատոնին, որը վառ իրադարձություն է դարձել երկրի մշակութային կյանքում: Այս միջոցառումը ավելի քան երկու տասնամյակ միավորում է տաղանդավոր դերասանների, ռեժիսորների եւ բոլոր նրանց, ովքեր գնահատում եւ սիրում են արվեստը: Նման միջոցառումները նպաստում են թատերական արվեստի զարգացմանը եւ տարբեր երկրների ստեղծագործական թիմերի միջեւ փոխգործակցության ամրապնդմանը: Վստահ եմ, որ այս տարվա բոլոր ներկայացումները մեծ հետաքրքրություն կառաջացնեն հանդիսատեսի մոտ եւ կգրավեն թատերական ստեղծագործության նոր երկրպագուներ»,- նշել է «ՎՏԲ-Հայաստան« բանկի գլխավոր տնօրեն - տնօրինության նախագահ Արա Ավագյանը:

«ARMMONO փառատոնը գոյություն ունի ավելի քան 20 տարի: Մոնոներկայացումն աշխարհում ճանաչված ժամանակակից թատերական ժանրերից է, որը հարազատ է դարձել մեր հանդիսատեսին նույնպես: Մենք շատ շնորհակալ ենք, որ «ՎՏԲ-Հայաստան» բանկն աջակցում է մեզ նման լայնածավալ նախագծում, որը, անկասկած, կարեւոր դեր կունենա հայկական մշակույթի զարգացման եւ միջազգային հարաբերությունների ամրապնդման գործում»,- նշել է փառատոնի տնօրեն Մարիաննա Մխիթարյանը:

Միջոցառման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը եւ թատերական ներկայացումների ժամանակացույցը կարելի է գտնել փառատոնի պաշտոնական կայքում եւ սոցիալական էջերում:

«ՎՏԲ-Հայաստան» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ». ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ

«Կոնվերս Բանկը» հայտարարում է դրամային եւ դոլարային պարտատոմսերի 2024-ի առաջին տրանշի տեղաբաշխման մեկնարկի մասին:

Ինչպես նշել են բանկում, ապրիլի 17-ից կտեղաբաշխվի 5 մլրդ դրամ ծավալով դրամային եւ 10 մլն ԱՄՆ դոլար ծավալով դոլարային պարտատոմսեր: Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կազմում է համապատասխանաբար 10.25% եւ 4.75%, արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝ կիսամյակային: Դրամային պարտատոմսերի մարման ժամետը 17.04.2026-ն է, իսկ դոլարային պարտատոմսերինը՝ 17.04.2027-ը:

«Կոնվերս Բանկը» պարբերաբար հանդես է գալիս պարտատոմսերի թողարկումներով: Բանկի կորպորատիվ պարտատոմսերը մեծ պահանջարկ ունեն թե՛ ինստիտուցիոնալ ներդրողների, թե՛ ֆիզիկական անձ հաճախորդների կողմից, այդ թվում՝ Converse Mobile հավելվածում ձեռքբերման հնարավորության շնորհիվ: Բանկը շատ է կարեւորում թվային տեխնոլոգիաների կիրառումը տեղաբաշխման գործընթացում: Ընդհանուր առմամբ, առ այսօր տեղաբաշխվել է մոտ 41,6 մլրդ ՀՀ դրամին համարժեք պարտատոմս, որից մոտ 19,6 մլրդ ՀՀ դրամին համարժեք պարտատոմսը ներկայումս շրջանառվում է Հայաստանի ֆոնդային բորսայում:»,- ասել է «Կոնվերս բանկի» Ներդրումային դեպարտամենտի տնօրեն Գրիգորի Զաքարյանը:

Թողարկման եւ տեղաբաշխման մանրամասներին, ծրագրային ազդագրի եւ թողարկման վերջնական պայմաններին կարող եք ծանոթանալ «Կոնվերս Բանկի» կայքէջում:

Պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները երաշխավորված են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Տեղաբաշխման ավարտից հետո պարտատոմսերը կներկայացվեն ցուցակման «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում՝ երկրորդային շուկայում շրջանառվելու համար:

«Կոնվերս Բանկը» վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԲԱՆՏՈՒՄ ԳՐՎԱԾ ՎԵՊԻ ԾՆՈՒՆԴԸ

«ՊԵՏՔ Է ՄԻ ՆՈՐ, ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԾ ՏԱՄ»

Հարավային Կովկասի մշակույթի վաստակավոր գործիչ, հայ գրող, արձակագիր, դրամատուրգ Ալեքսանդր Շիրվանզադեի ծննդյան 166-րդ տարեդարձն է: Գրողը, ով 1934 թվականից ԽՍՀՄ գրողների միության անդամ է, ծնվել է Ռուսական կայսրության ժամանակաշրջանում, Շամախիի նահանգում բնակվող դերձակի ընտանիքում:



Հետաքրքիր փաստ է, որ Շիրվանզադեն, գրող եւ գրականագետ Կոստան Զարյանն ու դերասան Հովհաննես Աբելյանը երեք քույրերի զավակներ են:

Շիրվանզադե գրողի ստեղծագործական կյանքի վրա ազդեցությունը սկսվել է վաղ տարիքում՝ հատկապես Բաքվում անցկացրած պատանեկության եւ երիտասարդության տարիներին: Այս տարիները, երբ մի քանի տարի դպրոցում սովորելուց հետո Ալեքսանդրը թողնում է կրթությունն ու մեկնում Բաքու՝ աշխատելու, որպեսզի կարողանա օգնել ընտանիքին, մեծ հետք են թողնում ապագա գրողի ստեղծագործությունների վրա: Այս ընթացքում նա աշխատում է նահանգային վարչության ատյաններում, նավթային գրասենյակներում, զանազան ընկերություններում՝ գրագիր, հաշվապահի օգնականի եւ հաշվապահի պաշտոնով: Գրողի ստեղծագործություններում հատկապես նկարագրվում է նավթային աշխարհը:

Այս տարիների ընթացքում իր գրական առաջին քայլերն անող Ալեքսանդրը թղթակցում է հայ եւ ռուսական մամուլին, գրում հոդվածներ նավթային հարցի եւ բանվորների դրության մասին: 1883 թվականին «Մշակ»-ում տպագրվել է Շիրվանզադեի առաջին գեղարվեստական երկը՝ «Հրդեհ նավթագործարանում» պատմվածքը, ապա «Գործակատարի հիշատակարանից» վիպակը:

Նույն թվականին նա մեկնել է Թիֆլիս, որտեղ ծանոթացել է հայ գրողների եւ մտավորականների հետ: 1884 թվականին «Արձագանք» շաբաթաթերթում լույս է տեսնում Շիրվանզադեի «Խնամատար» վիպակը, որում ներկայացված է հայ կապիտալիստի կերպարը, ապա 1885 թվականին՝ գավառական քաղաքի կյանքը ներկայացնող «Նամուս» վեպը, որի շնորհիվ էլ երիտասարդ գրողը հայտնիություն է ձեռք բերել:

1886-ից 1891 թվականներին Շիրվանզադեն աշխատում է «Արձագանք»-ում որպես քարտուղար, որտեղ էլ տպագրում է «Ֆաթման եւ Ասադը» (1888) եւ «Տասնութիննգ տարի անցած» (1890) նովելները, «Արտաքին» (1888) եւ «Զուր հույսեր» (1890) վեպերը:

Գրողը իր երկերի լավագույն ընտրանին գրում է 1890-ից 1905 թվականներին, երբ վերելք էր ապրում հասարակական-քաղաքական կյանքը: 1893 թվականին լույս է տեսնում «Արսեն Դիմաքսյան» վեպը, որն արտացոլում է հայ մտավորական հոսանքների գաղափարական ու բարոյական հակասությունները եւ գործունեությունը, իսկ 1896 թվականին՝ ունսանողական կյանքին վերաբերող «Կրակ» վիպակը: Ավելի ուշ գավառական քաղաքի արհեստավորության սոցիալական ու բարոյական ողբերգության պատմությունը շարունակում է «Չար ոգին» վիպակում:

Ստեղծագործական կյանքից բացի՝ Ալեքսանդր Շիրվանզադեն դերակատարում է ունեցել ազգային- հասարակական կյանքում: 1895-ից 1896 թվականներին արեւմտահայերի կոտորածների շրջանում Հնչակյան կուսակցությանն անդամակցող Շիրվանզադեն մեկնում է Ռուսաստան՝ նյութական աջակցության միջոցներ հանգանակելու եւ աշխատանքները կազմակերպելու համար: Հենց այս ընթացքում էլ կալանավորվել է ռուսական ոստիկանության կողմից եւ բանտարկվել Թիֆլիսի Մետեխի բանտում, որտեղ էլ գրել է իր գլխուրգործոցը՝ «Քաոս» վեպը:

«Չեմ կարող թաքցնել, ինձ թվում է, որ հայոց գրականությանը պետք է մի նոր նշանավոր գործ տամ», - բանտարկության սկզբում ասել է Շիրվանզադեն:

«Քաոս»-ը կապիտալիստական մեծ քաղաքի ռեալիստական նկարագրությունն է, որը հայ քննադատական ռեալիզմի ամենախոշոր երեւույթն է թե՛ գեղարվեստական եւ թե՛ գաղափարական առումով: Վեպում ներկայացվում է մարդկային ողբերգության պատճառներն ու ակունքները, հոգեբանական բարդ երեւույթների արտաքին ազդակները եւ սոցիալական հիմքերը:

Վեպը այնքան մեծ հնչեղություն է ձեռք բերել, որ առ այսօր համարվում է Շիրվանզադեի հաղթաթուղթը: Այն հիմք է հանդիսացել ֆիլմերի, հեռուստատեսային նախագծերի համար:

1898 թվականի հունվարին Շիրվանզադեն երկու տարով աքսորվում է Օդեսա եւ հենց այս ընթացքում էլ գրում է «Մելանիա» եւ «Արտիստը» վիպակները, «Վարդան Աիրումյան» վեպի առաջին մասը:

Շիրվանզադեն բացառիկ դեր է խաղացել հայ դրամատուրգիայի եւ թատրոնի պատմության մեջ:

1905 թվականին նա մեկնում է Փարիզ եւ հինգ տարի բնակվում այնտեղ՝ տուրք տալով լիբերալ գաղափարախոսությանը: Սրան հաջորդում է առաջին համաշխարհային պատերազմը, որը խոր հետք է թողնում գրողի վրա եւ զգալիորեն արտահայտվում նրա հոդվածներում:

Շիրվանզադեի ստեղծագործությունների հիման վրա նկարահանվել են ո՛չ միայն «Քաոս», այլ նաեւ «Նամուս», «Չար ոգի», «Պատվի համար» կինոնկարները:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՊԱՏՐՎԱԿ

ԻՋԵՑՎԵԼ Է ՂԱԶԱՆՉԵՑՈՑԻ ԳՄԲԵԹԸ

Ադրբեջանական տելեգրամյան ալիքներում նկարներ են հայտնվել, թե ինչպես են Շուշիի Սուրբ Ղազանչեցոցի վանքի գմբեթը վերածել մզկիթի գմբեթի:

Լուսանկարներից երեւում է, որ ադրբեջանական կողմը քանդել է երկթեք ճակատներից մեկի վրայի խաչաձեւ լուսամուտը եւ դրանից վեր գտնվող պատկերաքանդակը:

Նկարներին կից առկա է հետեւյալ մակագրությունը. «Շուշա քաղաքի «Գազանչի» եկեղեցու վերականգնումն ակտիվացել է. Աշխատանքներ են տարվում տանիքի փոխարինման եւ վնասված պատերի բեկորների վերականգնման ուղղությամբ»:

Վերականգնման անվան տակ այն վերածում են մզկիթանման շինության:

Հիշեցնենք, որ 44-օրյա պատերազմի ժամանակ ադրբեջանական ռմբակոծությունից վնասվել էր եկեղեցու հարավային ճակատը՝ խաչաձեւ լուսամուտով հանդերձ: Այն հստակ երեւում է դեռեւս 2020 թվականի հոկտեմբերին արված լուսանկարներից: Ուստի ակնհայտ են տաճարի մանրամասների ուղղակի ավերման, ձեւափոխման աշխատանքները, ինչը դրսեւորվում է տաճարի չակերտավոր վերականգնման հենց սկզբից:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՂԹԵԼ Է ԲԱՐՍԵԼՈՆԱՅԻՆ

Ֆրանսիական ՊՍԺ-ի ֆուտբոլիստները Չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակչի պատասխան խաղում հաղթանակ են տարել իսպանական «Բարսելոնայի» նկատմամբ:
Հանդիպումը կայացել է Բարսելոնայի օլիմպիական մարզադաշտում եւ ավարտվել 4:1 հաշվով:
Փարիզյան թիմի կազմում աչքի են ընկել Դեմբելեն, Վիտինյան ու Մբապեն (11մ), որը դուբլ է ձեւակերպել այս խաղում:
Կիսաեզրափակչում ՊՍԺ-ն կհանդիպի Դորտմունդի «Բորուսիայի» հետ:

ՄՐՑԱՇԱՐԻ ՀԱՂԹՈՂ

Հայաստանի հրաձգության հավաքականի անդամ Էլմիրա Կարապետյանը դարձել է Ռիո դե Ժանեյրոյի միջազգային մրցաշարի հաղթող:
Փարիզի Օլիմպիական խաղերի վարկանիշային մրցաշարում Կարապետյանը, 3-րդ տեղով դուրս գալով եզրափակիչ, դարձել է մրցաշարի հաղթող: Եզրափակչում հայ հրաձիգը 240,7 միավորով առաջինն է:
Էլմիրա Կարապետյանը մինչ այս արդեն իսկ ուներ Փարիզի Օլիմպիական խաղերի ուղեգիր:
Ավելի վաղ կայացել էր 10 մետր օդամղիչ ատրճանակ ձեւի զույգերի պայքարը, որտեղ Էլմիրա Կարապետյան-Բենիկ Խլղաթյանը զույգը միայն 5-րդն էր: Հայաստանը Ռիոյի վարկանիշային այս մրցաշարում ներկայացված է երեք մարզիկով՝ Էլմիրա Կարապետյան, Բենիկ Խլղաթյան, Հրաչ Բաբայան:

3 ԱՐԾԱԹ ԵՎ 2 ԲՐՈՆԶ

Բռնցքամարտի Հայաստանի երիտասարդական հավաքականը Խորվաթիայում անցկացված այս տարիքային խմբի Եվրոպայի առաջնությունում հինգ մեդալ է նվաճել: Արծաթե մեդալի արժանացել են 51 կգ քաշային Դավիթ Սաֆարյանը, 92 կգ Դավիթ Սիմոնյանը եւ + 92 կգ Միսակ Տեպանյանը: Իսկ Էրիկ Առուստամյանը՝ 57 կգ քաշային կարգով եւ Լուսյա Ավետիսյանը՝ 54 կգ, բավարարվել են բրոնզով:

ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՄԵՆԱՄԱՐՏԵԼ

Խառը մենամարտերի մինչեւ 70 կգ քաշային կարգում UFC դասակարգման չորրորդ համար Արման Ծառուկյանը հրաժարվել է հունիսի 1-ին Նյու Ջերսիում անցկացվելիք UFC 302 մրցաշարում մենամարտել այս քաշային կարգում UFC չեմպիոն, ռուսաստանցի Իսլամ Մախաչեւի հետ: Այդ մասին հայտնել է Արման Ծառուկյանի մենեջեր Սայաթ Աբդրահմանովը: Արման Ծառուկյանը UFC 300 մրցաշարում պարտության էր մատնել դասակարգման առաջին համար, բրազիլացի Չարլզ Օլիվեյրային եւ դարձել չեմպիոնական տիտղոսի պաշտոնական հավակնորդ: «Մեզ առաջարկում էին ընդունել Մախաչեւի դեմ մենամարտը հունիսի 1-ին Նյու Ջերսիում, սակայն մենք որոշեցինք հրաժարվել եւ այդ մենամարտին պատրաստվելու համար անցկացնելու լիարժեք մարզումային ճամբար»,- Սայաթ Աբդրահմանովի խոսքը մեջբերում է «МАТЧ ТВ»-ն:

● *Ապրիլի 20-ին՝ ժամը 12:00-ին, «Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Ալադին» մանկական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հաճախ ենք լսում քաղաքացիական պաշտպանության ծառայությունների եւ կազմավորումների մասին. ինչե՞ր են դրանք:

Մուշեղ Առաքելյան (20 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացիական պաշտպանության ծառայությունները ստեղծվում են պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաեւ պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպություններում, որոնք նախատեսված են քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով ոլորտային (բժշկական, էներգետիկայի, տրանսպորտային, կոմունալ-տեխնիկական եւ այլն) խնդիրների լուծման համար:

Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ընդհանուր խնդիրներն են՝

- քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը եւ իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի ռազմական դրության ժամանակ գործելու դեպքում,
- քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կազմավորումների ստեղծումը, դրանց ապահովումն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, պատրաստումը եւ մշտական պատրաստականության վիճակում պահպանումը,
- ստեղծված իրադրության մասին ոլորտային տեղեկատվության ստացման, վերլուծման եւ գնահատման կազմակերպումն ու քաղաքացիական պաշտպանության համապատասխան պետին փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու համար:

ՀՀ ԱԻՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Խոցման օջախներում փրկարարական եւ վթարավերականգնողական աշխատանքների կատարման համար համայնքներում, կազմակերպություններում ստեղծվում են ինժեներական, վթարատեխնիկական, գյուղատնտեսական կենդանիների պաշտպանության, հետախուզական եւ քաղաքացիական պաշտպանության այլ կազմավորումներ: Դրանց անհրաժեշտ տեսակները, թիվը, կազմակերպական կառուցվածքը եւ հագեցվածության նորմերը մշակում ու հաստատում են կազմավորումներ ստեղծող քաղաքացիական պաշտպանության պետերը (համայնքների ու կազմակերպությունների ղեկավարները):

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Եթե երեխայի ավագ եղբայրը կամ քույրը հաճախում են տվյալ դպրոց, ապա նրան որեւէ արտոնություն տրվո՞ւմ է:

Մովսես Երիցյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ ցանկացած ծնող իրավունք ունի երեխայի ուսուցման համար ընտրելու ուսումնական հաստատությունը եւ կրթության ձեւը: Հետեւաբար, որեւէ չափանիշ, ներառյալ բնակավայրին կամ աշխատանքի վայրին մոտ գտնվելու կամ տվյալ դպրոց հաճախող քույր կամ եղբայր ունենալու փաստը, չի կարող որեւէ երեխայի գրանցման համար առաջնահերթություն ապահովել:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե ցանկանում եք, որ Ձեր երեխան սովորի հենց Ձեր նախընտրած դպրոցում, ապա հարկավոր է հնարավորինս շուտ գրանցվել առցանց համակարգի միջոցով, քանի դեռ տվյալ դպրոցի համար սահմանված տեղերը չեն սպառվել:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի մարմնամարզության հավաքականի անդամները հաջող են մեկնարկել աշխարհի գավաթի խաղարկության վերջին փուլում:

Հայաստանի ընտրանու կազմում Օլիմպիական ուղեգիր նվաճելու հնարավորություն ունի Վահագն Դավթյանը (օղակներ): Դավթյանը ուղեգիր կնվաճի, եթե եզրափակչում զբաղեցնի առաջին հորիզոնականը:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 4 + 5	+15 + 20
Կոտայքի լեռներ	+ 2 + 5	+15 + 19
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 10	+20 + 22
Գեղարքունիք	+ 2 + 5	+15 + 18
Լոռի	+ 5 + 7	+22 + 25
Տավուշ	+ 7 + 10	+23 + 26
Արագածոտնի լեռներ	+ 2 + 5	+14 + 18
Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 9	+19 + 23
Արարատ	+10 + 12	+25 + 27
Արմավիր	+ 8 + 10	+25 + 27
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 4	+15 + 19
Վայոց ձորի նախալեռներ	+10 + 13	+24 + 27
Սյունիքի հովիտներ	+ 8 + 11	+24 + 26
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8	+18 + 21
ԼՂՀ	+ 2 + 7	+17 + 20
Երեւան	+ 13 + 15	+ 20 + 22

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.4.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*